

Բուժօգնությունը Ֆրանսիայում

Իմ իրավունքները

Ես նոր եմ ժամանել Ֆրանսիա և բուժօգնության կարիք ունեմ: Ես չեմ լրացրել բժշկական ապահովագրության որևէ փաստաթուղթ, սակայն ես կարող եմ դիմել բժշկի հետևյալ հաստատություններում:

- հասանելի բուժօգնության հերթապահ ծառայություններ (PASS) ունեցող հիվանդանոցներում: Ես այնտեղ կարող եմ ստանալ բուժօգնություն, անհաժեշտության դեպքում, անվճար դեղորայք:
- ատամնաբուժական, ակնաբուժական, հոգեբանական և այլ ասոցիացիաներում:
- մոր և մանկան առողջության պահպանման կենտրոններում (PMI), որոնք զբաղվում են 0-ից մինչև 6 տարեկան երեխաների բուժօգնության և պատվաստման հարցերով:

Իրազեկվել՝

Առողջապահական ապահովագրության հիմնադրամի (CPAM) տեղամասային գրասենյակներում կամ AMELI.FR կայքում

Ամփոփում

Ես չունեմ բժշկական ապահովագրություն:

Ես կարող եմ դիմել բժշկի, սակայն պետք է վճարեմ մատուցված ծառայության համար:

Հակառակ պարագայում կարող եմ դիմել PASS անվճար ծառայություններին և առողջապահական ասոցիացիաներին:

Ես ունեմ բժշկական
ապահովագրություն:

Ես դիմում եմ բժշկի և նրանից տեղեկանում, արդյոք նրա սպասարկման սակագները փոխհատուցվում են իմ ապահովագրության՝ CMU, AME և այլ պետական ապահովագրական համակարգերի կողմից:

PUMa - Առողջապահական պետական ընդհանուր պաշտպանություն, որը թույլ է տալիս փոխհատուցել բուժծառայությունների և նշանակված դեղորայքի միայն **մի մասը**:

AME, CMUc- Ես
կանխավճար չեմ
կատարում, բուժօգնության
ծախսերը անմիջականորեն
փոխհատուցվում են
սոցիալական
ապահովության կողմից: